ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջեվան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 53

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքապետարանի ենթակայության ՀՈԱԿ-ները լիցենզավորելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել այդ նախադպրոցական ուսումնական հաստատությունների և նախակրթարանի կողմից օգտագործվող, համայնքի սեփականությունը հանդիսացող մասնաշենքերը և դրանց սպասարկման հողամասերը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել վերոնշյալ կազմակերպություններին:
Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի, 21-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է.

Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝
1.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Գետահովիտ 1-ին փողոց թիվ 19 հասցեում գտնվող մշակույթի տան մասնաշենքի 1-ին հարկի 140.35քմ մակերեսով և 2-րդ հարկի 301.9քմ մակերեսով տարածքը, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Գետահովիտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
2.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Վազաշեն 9-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող 996.55քմ ներքին մակերեսով մանկապարտեզի շենքն, իր սպասարկման 4069.0քմ մակերես հողամասով /ծածկագիր 11-059-0024-0005/, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Վազաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
3.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Դիտավան 1-ին փողոց թիվ 35 հասցեում գտնվող վարչական շենքի 203.7քմ մակերեսով տարածքը /նկուղ՝ 30.4քմ, 1-ին հարկ՝ 89.2քմ, 2-րդ հարկ՝ 84.1քմ մակերեսով/ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Դիտավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
4.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Ազատամուտ վարչական սահմաններում գտնվող 1310.41քմ մակերեսով մանկապարտեզի շենքն /1-ին հարկ՝ 681.07քմ, 2-րդ հարկ՝ 629.34քմ մակերեսով/, իր սպասարկման 3450.5քմ մակերես հողամասով, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
5.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Բերքաբեր 2-րդ փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի 1-ին հարկի 172.7քմ մակերեսով տարածքը / անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Բերքաբերի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
6.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Սևքար 28-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող 486.3քմ ներքին մակերեսով մանկապարտեզի շենքն, իր սպասարկման 1746.0քմ մակերես հողամասով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Սևքարի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
7.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Գանձաքար 18-րդ փողոց 1-ին փակ. թիվ 4 հասցեում

գտնվող 417.2քմ ներքին մակերեսով մանկապարտեզի շենքն և 16.4քմ ներքին մակերեսով կաթսայատունը, իր սպասարկման 1955.0քմ մակերես հողամասով, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Գանձաքար գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
8.Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Խաշթառակ 9-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող 854.02քմ ներքին մակերեսով մանկապարտեզի շենքն, իր սպասարկման 4339.2քմ մակերես հողամասով, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Խաշթառակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱԲԵԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ԲՈՒՂԴԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ԽՈՐԵՆ

ԾՈՎԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԶՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՂԱԶՈՒՄՅԱՆ ՄԱՆԵ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԵՀՐԱԲՅԱՆ ԱՆՈՒՇ

ՉԱՊՈՒԽՅԱՆ ԳԱԳԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋՈՅԱ

ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ

ՍԱՐՀԱՏՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՎԱՐՇԱՄՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**